(https://gnumner.minfin.am/website/images/original/a184c7af.pdf):

Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ «Մանես Կոնստրուկցիա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է բավարարման:

6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ **գրավոր միջնորդության տեսքով**: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Սույն գործով, նկատի ունենալով, որ Հայցվորը նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքում բացակայում է **գրավոր միջնորդությունը**՝ դատական ծախսերի հետ կապված, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Մանես Կոնստրուկցիա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու մասին, բավարարել.

անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի և «Մանես Կոնստրուկցիա» ՍՊԸ-ի (կոնսորցիում՝ «Հոբոսշին» ՍՊԸ, «Այպոշին» ՍՊԸ, «Վանդաժի» ՍՊԸ) միջև 22.01.2026թ. կնքված թիվ «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/11» ծածկագրով գնման պայմանագիրը Ալավերդի համայնքի ղեկավար Դ. Ղումաշյանի կողմից միակողմանի լուծելու մասին 16.03.2026թ. ԱՀ-1026/26 որոշումը (ծանուցումը):

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է

բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEF0-363D-4F35-9F0E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am